

ԲԱԺԻՆ 4

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Մեթոդաբանական պարզաբանումներ

Բնակչության տնտեսական բնութագրերի վերաբերյալ տեղեկությունները վերաբերում են ԼՂՀ 2005 մարդահամարին նախորդող շաբաթում (հոկտեմբերի 11-ից 17-ը) 15 և բարձր տարիքի մշտական բնակչության տնտեսական ակտիվությանը:

Տնտեսական  
ակտիվությունը

Հաշվետու ժամանակաշրջանի տնտեսապես ակտիվ բնակչության (կամ աշխատուժի) ցուցանիշը ներառում է ընդամենը զբաղված բնակչության և գործազուրկների հանրագումարը (Աշխատանքի միջազգային կազմակերպության բնորոշումներով):

**Զբաղված բնակչությունը** ներառում է մշտական բնակչությունից 15 և բարձր տարիքի բոլոր այն անձանց, ովքեր 2005թ. հոկտեմբերի 11-ից 17-ը դասվել են հետևյալ կարգավիճակներից մեկին՝

**1. Վճարովի աշխատանքի ոլորտում զբաղվածներ՝**

ա) անձինք, ովքեր հաշվետու ժամանակաշրջանում կատարել են որոշակի աշխատանք և դրա դիմաց ստացել են փոխհատուցում աշխատավարձի տեսքով՝ դրամով կամ բնեղեն,

բ) անձինք, ովքեր հաշվետու ժամանակաշրջանում ունեցել են աշխատանք, բայց ժամակափորապես չեն աշխատել՝ պահպանելով պաշտոնական կապն աշխատավայրի հետ:

**2. Ինքնազբաղվածներ**

ա) անձինք, ովքեր հաշվետու ժամանակաշրջանում կատարել են որոշակի աշխատանք եկամուտ ստանալու կամ ընտանիքին օգուտ բերելու նպատակով՝ դրամով կամ բնեղեն,

բ) անձինք, ովքեր ունեցել են իրենց սեփական կազմակերպությունը, սակայն հաշվետու ժամանակաշրջանում ժամանակավորապես չեն աշխատել՝ այս կամ այն կոնկրետ պատճառով:

**Որոշակի աշխատանք** հասկացողությունը, ըստ միջազգային հանձնարարականների, բնութագրվել է հաշվետու ժամանակահատվածում առնվազն մեկ ժամվա աշխատանքը:

**Գործազուրկների** թվին են դասվել մշտական բնակչությունից 15 և բարձր տարիքի բոլոր այն անձինք, ովքեր հաշվետու ժամանակաշրջանում բավարարել են հետևյալ 3 պայմաններին՝

ա) աշխատանք չեն ունեցել,

բ) փնտրել են աշխատանք զբաղվածության տարածքային կենտրոնների օգնությամբ կամ ինքնուրույն,

գ) պատրաստ են եղել անցնելու աշխատանքի առաջիկա երկու շաբաթվա ընթացքում:

Գործազուրկների թվին են դասվել նաև այն անձինք, ովքեր նշել են, որ աշխատանք չեն փնտրել հետևյալ պատճառներով՝

ա) դիմել են աշխատանքի ընդունվելու խնդրանքով և կանցնեն աշխատանքի առաջիկայում,

բ) դիմել են աշխատանքի ընդունվելու խնդրանքով և սպասում են պատասխանի:

**Առաջին անգամ աշխատանք փնտրողների** թվին են դասվել այն անձինք, ովքեր նախկինում ընդհանրապես չեն աշխատել և աշխատանք են փնտրել առաջին անգամ:

**Տնտեսապես ոչ ակտիվ** բնակչության ցուցանիշը ներառում է մշտական բնակչությունից 15 և բարձր տարիքի բոլոր այն անձանց, ովքեր հաշվետու ժամանակաշրջանում չեն դասվել ոչ որպես զբաղվածներ և ոչ էլ որպես գործազուրկներ: Այսինքն՝ այն անձինք, ովքեր մարդահամարի հարցաթերթում նշել են, որ աշխատանք չեն փնտրել հետևյալ պատճառներից մեկով պայմանավորված՝ վարել են տնային տնտեսություն, աշխատանք գտնելու հույս չեն ունեցել, աշխատելու անհրաժեշտություն չեն ունեցել, սովորել են, տարիքային, առողջական, այլ պատճառներ կամ փնտրել են աշխատանք, սակայն պատրաստ չեն եղել անցնելու աշխատանքի առաջիկա երկու շաբաթում:

**Զբաղվածության կարգավիճակի կատեգորիաները**

Ստորև ներկայացվածը բնութագրում է տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածության կարգավիճակի կատեգորիաները:

**«Վարձու աշխատող»**-ների թվին են դասվել այն անձինք, ովքեր աշխատել են գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի համաձայնության հիման վրա և այդ աշխատանքի դիմաց ստացել են փոխհատուցում աշխատավարձի տեսքով՝ դրամով կամ բնեղեն:

**«Գործատու»**-ների թվին են դասվել այն անձինք, ովքեր ինքնուրույն կամ մի քանի գործընկերների հետ վարել են իրենց սեփական կազմակերպությունը (բիզնեսը) և մշտապես վարձել աշխատողներ:

**«Կոոպերատիվի (արտադրական) անդամ»**-ների թվին են դասվել այն անձինք, ովքեր արտադրական կոոպերատիվի ակտիվ (աշխատող) անդամ են, մյուս անդամների հետ հավասար իրավունքներով մասնակցել են արտադրության կազմակերպմանը, արտադրանքի իրացմանը, կազմակերպության եկամուտների բաշխման հետ կապված հարցերի լուծմանը:

Կոոպերատիվում (արտադրական, սպառողական) վարձու աշխատանքով զբաղված անձը չի հանդիսացել արտադրական կոոպերատիվի անդամ:

**«Անհատ ձեռնարկատեր»**-երի թվին են դասվել այն անձինք, ովքեր վարել են իրենց կազմակերպությունը կամ ինքնուրույն իրականացրել են մասնագիտական, ստեղծագործական, առևտրային (կոմերցիոն) կամ այլ գործունեություն՝ առանց վարձու աշխատողների ներգրավման կամ խիստ ժամանակավոր ներգրավմամբ:

**«Ինքնազբաղված»**-ների թվին են դասվել այն անձինք, ովքեր ինքնուրույն զբաղվել են եկամուտ բերող մասնագիտական կամ առևտրային գործունեությամբ, առանց աշխատողների ներգրավման: Առանձին դեպքերում, եթե նույնիսկ ներգրավվել են, ապա այն մշտական բնույթ չի կրել:

Այս խմբի մեջ են մտել նաև անձնական օժանդակ տնտեսությունում զբաղվածները:

Աշխատանքի միջազգային կազմակերպության դասակարգմամբ «Անհատ ձեռնարկատեր» և «Ինքնազբաղված» կարգավիճակ ունեցողները միավորված են մեկ ընդհանուր խմբում (Աղյուսակ 4.2, 4.3):

**«Ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող ընտանիքի անդամ՝ ազգական»**-ների թվին են դասվել այն անձինք, ովքեր օգնելու, օժանդակելու նպատակով առանց վարձատրման աշխատել են ընտանիքի անդամին կամ ազգականին պատկանող հիմնարկում, կազմակերպությունում: Նրանք որպես կանոն, դրամական կամ բնեղեն փոխհատուցում չեն ստացել, այլ աշխատել են միայն որոշակի պարգևատրման դիմաց կամ ընտանիքի բյուջեի հաշվին:

**«Գյուղացիական տնտեսության անդամ»**-ների թվին են դասվել այն անձինք, ովքեր զբաղված են եղել գյուղացիական տնտեսությունում:

**«Այլ կարգավիճակ»**-ներ ունեցողների թվին են դասվել այն անձինք, որոնց զբաղվածության կարգավիճակը վերոնշյալներից ոչ մեկում ներառված չէ: